ՀԱՀ ՀԱՏՈՒԿ
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԲԱԺՆԻ
«ԳՈՐԴՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ»
ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

8-ը ապրիլի, 1999 թ. Թիվ. 1

ԳՈՐԴՅԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ

«Գորդյան հանգույց» ծրագրի անդրանիկ կլոր սեղանի մասնակիցներն էին ՀՀ կրթության և գիտության նախարարության նախադպրոցական, արտադպրոցական և հատուկ վարչության պետ Ռոբերտ Ստեփանյանը, ՆԳ և ԱԱՆ քրեական հետախուզության վարչության պետ, փոխգնդապետ Մարգար Մելքոնյանը և սոցիալական ապահովության նախարարության կանանց ու երեխաների հարցերի վարչության պետի տեղակալ Ռազմիկ Գասպարյանը:

«Գորդյան հանգույց» ծրագրի տեղեկագիր
Հայաստանի ամերիկյան համալսարան
Հատուկ դասընթացների բաժին
URL:// www.aua.am/aua/extens/lectures

Ծրագրի համակարգող՝
Հրայր Զորյան

Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58

Հասցեատեր՝

ՄՈՒՐԱՑԻԿ ԵՎ ԹԱՓԱՌԱՇՐՋԻԿ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հանդիպման մասնակիցների խոսքերով, չի կարելի պնդել, թե անչափահասների թափառաշրջիկության և մուրացկանության երևույթները նոր, շուկայական տնտեսությամբ պայմանավորված դրսևորումներ են. դրանք առավել կամ պակաս արտահայտված են բոլոր հասարակություններում: Ըստ Ռոբերտ Ստեփանյանի, այս հիմնախնդիրը բավականին դժվար տեսանելի է այն առումով, որ հաճախ դիտարկվում է միայն խնդրի վերին շերտը: Խորքային ճանաչման համար անհրաժեշտ է մանրակրկիտ աշխատանք, մինչդեռ մինչ օրս Հայաստանում չի անցկացված խորը վերլուծական հետազոտություն: Ռազմիկ Գասպարյանի հավաստմամբ, սոցապնախարարությունում հատուկ ծրագրի մշակման աշխատանքներն սկսելիս, չեն կարողացել գտնել մի որևէ աղբյուր, որտեղ սահմանված լինեին թափառաշրջիկության, մուրացկանության երևույթները: Մինչդեռ դրանք արագորեն ընդլայնման միտում ունեն:

«Եթե չհաջողվի ուժեղացնել ընտանիքը, համայնքը, համապատասխան աջակցություն ապահովել համակարգին, ապա դժվար կլինի խոսել երեխաների հիմնախնդիրների լուծման մասին:»

Հանդիպման մասնակիցները համակարծիք էին, որ թեև խնդրի հիմնական պատճառը սոցիալականն է, այսուհանդերձ, դա միակ ազդակը համարել չի կարելի: Սոցիալապես անապահով ընտանիքների ծնողները երբեմն ստիպված են լինում իրենց երեխաներին ուղարկելու փողոց՝ առօրյա կարիքները հոգալու համար: Սակայն այս երեխաների սոցիալական պահանջներն այս կամ այն կերպ լուծելով, բացատրական աշխատանք տանելով, դեռևս չի կարելի խոսել թափառաշրջիկության և մուրացկանության հարցի լուծման մասին: Եթե հասարակության մեջ կա այդ տեղը, հնարավորությունն, ապա այդ ճանապարհից դուրս բերված մի երեխային անմիջապես փոխարինելու կգա մեկ ուրիշը: Երեխաների շրջանում թափառաշրջիկության և մուրացկանության հոգեբանության ձևավորման համար սոցիալականից զատ կան նաև այլ նպաստավոր պայմաններ: Մասնավորապես, հանրապետության կրթական համակարգում իրավիճակն այնպիսին է, որ հիմնական ուշադրությունն ուղղվում է հանրակրթական կրթությանը, տեսադաշտից դուրս թողնելով այն կրթօջախները, որոնք կոչված են լրացնելու երեխայի դաստիարակչական ու կրթական պահանջմունքները:

(շարունակությունը 2-րդ էջում)

Արդյունքում՝ երեխաներից շատերը հայտնվում են չօգտագործված էներգիայի վիճակում: Այդ էներգիան չգտնելով դրական կիրառություն, իր դրսևորումն է գտնում փողոցում:

Կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի կարծիքով, հիմնական խնդիրն այն է, որ այսօր Հայաստանում ստեղծված չէ երեխաների իրավունքների պաշտպանության որոշակի համակարգ: Այդ գործառույթը բաշխված է տարբեր նախարարությունների միջև, և այս պարագայում չկա մեկ միասնական տեր: Չկան այդ իրավունքները պաշտպանողներ, վերահսկողներ, դրանք ապահովող մեխանիզմներ:

Թափառաշրջիկ երեխաների խնդրին հարակից հիմնահարց է գիշերօթիկ հաստատություններում ընդգրկված երեխաների թվի աճը, որը տարեց-տարի մեծանում է:

Կլոր սեղանի մասնակիցներն արձանագրեցին, որ թեև փորձեր են արվում համակարգելու, նպատակաուղղելու տարբեր գերատեսչությունների աշխատանքներն, այսուհանդերձ, ակնկալվող արդյունքի հասնել դեռևս չի հաջողվում: Հաճախ, տարբեր օղակներում միևնույն առաքելությամբ գործում են տարբեր հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր: Երեք նախարարությունների ներկայացուցիչները ոչ բավարար արդյունավետ գնահատեցին նաև 1998 թվականին ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի գործունեությունը, որտեղ ներկայացված են ՆԳ և ԱԱ, առողջապահության, սոցիալական ապահովության, մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի, կրթության և գիտության նախարարությունները:

ՆԳ և ԱԱ նախարարության համապատասխան կառույցների գլխավոր խնդիրը փողոցներից թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներին հավաքագրելն ու նրանց մինչև մեկ ամիս ընդունիչ-բաշխիչ կայանում պահելն է: Մարգար Մելքոնյանի խոսքերով, մեկ ամիս անց իրենք չեն կողմնորոշվում, թե ուր ուղարկեն երեխային: Սովորաբար նրանք հայտնվում են կրթության և գիտության նախարարությանը պատկանող Նուբարաշենի հատուկ դաստիարակչական գիշերօթիկ դպրոցում կամ Վարդաշենի հատուկ կրթահամալիրում, որտեղ, ըստ մասնագետների, դեռևս գործում են հին, ժամանակավրեպ մոտեցումներով: Ռոբերտ Ստեփանյանի հավաստմամբ, այժմ փորձ է արվում այդ կրթահամալիրը դիտել ոչ թե որպես մասնագիտական կրթության հաստատություն, այլ հոգեբանա-սոցիալական վերականգնողական կենտրոն, որի աշխատանքն ուղղված կլինի ոչ միայն դեպի երեխան, այլ դեպի նրա ընտանիքն, այն համայնքը, որտեղից եկել է նա: Եթե չհաջողվի ուժեղացնել ընտանիքը, համայնքը, համապատասխան աջակցություն ապահովել համակարգին, ապա դժվար կլինի խոսել երեխաների հիմնախնդիրների լուծման մասին: Այս մոտեցումը խրախուսվում է նաև սոցապնախարարության կողմից: Ըստ Ռազմիկ Գասպարյանի, գիշերօթիկ հաստատությունները ոչնչով չեն տարբերվում մեկուսարաններից, ուստի,-«Մանկատուն տանող ճանապարհը պետք է լինի հարյուր փականի տակ, իսկ դեպի ընտանիք ուղին՝ լուսավորված կանաչով»:

«Մանկատուն տանող ճանապարհը պետք է լինի հարյուր փականի տակ, իսկ դեպի ընտանիք ուղին՝ լուսավորված կանաչով»:

Ըստ նրա, վերջին հինգ տարիներին Հայաստանում որդեգրվել է 2070 երեխա:

Ներկայումս սոցապնախարարությունում քննարկվում է առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար նախատեսված կենտրոններ ստեղծելու ծրագիրը: Նախատեսվում է գիշերօթիկ դպրոցների հիմքի վրա ստեղծել այնպիսի կառույց, որն իր վրա կվերցնի երեխաների սոցիալական, իրավաբանական աջակցության, սոցիալ-հոգեբանական վերականգնման խնդիրները:

Հանդիպման մասնակիցների եզրահանգմամբ, որպեսզի երեխան չանցնի ընտանիք -փողոց-ընդունիչ-բաշխիչ կայան-հատուկ դպրոց երկար և հիվանդագին ճանապարհը, հարկ է ապակենտրոնացնել, հնարավորին չափ ընտանիքին մոտեցնել եղած կրթական և սոցիալական ծառայությունները: Սա վերաբերում է նաև այն գիշերօթիկ հաստատություններին, որոնք հատուկ կրթական ծրագիր են իրականացնում, մանկավարժական աջակցություն կազմակերպում:

Երեք նախարարությունների ներկայացուցիչները համակարծիք էին, որ խնդրին լուծում կարելի է տալ միայն միասնական ջանքերով, ընտանիք-համայնք-պետություն շղթայում համաձայնեցված գործողություններով, երեխաների իրավական պաշտպանության միասնական համակարգի, անհրաժեշտ լծակների ստեղծմամբ, կառավարության անմիջական մասնակցությամբ: